Խսկայն ունիմ ի մենամարտ ելանել.
Դու քաջ գիտես, որ ես չունիմ ախոյեան,
Քանի ես կամ, անվրտանգ է Հայաստան.
Այն քոյ տեսիլ արտադրութիւն է գինւոյ,
Երևի դեռ չես կըշտացել ի քընոյ։

Սլուկ.

Գուցե արքայդ մըտածութեամբ է քընել,
Որ դշխոյին յաղողել է տեսանել.
Ես ևս մէկ օր մեռած դուստրս երբ տեսայ,
Նոյն ամսի մէջ կրկին դառայ նոր փեսայ.
Երրորդ հարսնս չէի տեսած մինչ այն օր,
Նոյն գիշերը հանդիպեցայ ես անոր։

Արզամ.

Ես իմ հոգին, ճշմարիտ է ասածը,
Արքայն պիտի կատարել իւր տեսածը.
Դշխոյի պես մէկ օրիորդ գտանենք,
Եւ արքային նորափեսայ տեսանենք։

Երուանդ.

Մեր քաջ արանց արքայն դեռ չէ ծերացած,
Նորան շատ կեանք պիտի տեսնենք ուրեցած.
Մէկ օրիորդ կըճանաչեմ ի Մըծբին,
Որոյ նըման կարծեմ չկայ յաշխարհին,
Դուստր է մեծի նահապետին Բզնունեաց,
Եւ ինքն արդէն ութուտասանց է ամաց։

Սլուկ.

Լաւ խորհուրդ է, երբ կատարի մեր որսը,
Ինքնին կերթամ ուետաւոր առ հարսը.
Արքայն պարգև հարանախոսի չի խնայիր,
Թէ չաւելնայ կալուածներս, չի պակսիր։

Արքայ.

Սլուկ, պատրաստ է քեզ պարգև արժանի.
Դու զինակիր պիտի լինիս արքայի.
Ակնարկեցէք, թող փողերը հնչեցնեն,
Լրէնիերուն կապարանքն արձակեն։
(Փողերը հնչեցին, երէնիերը սկսան այս եւ այն կողմ վազվազել. որսն սկսաւ)։

Արքայ.

Դանրացած եմ, ես չեմ կարող հեծանել։
(Գահաւորակի վերայ կըհանեցուին)։

Սլուկ.

Զկարէ լուսին զստուերդ ծառոց հալածել։

Երուանդ.

Ահա որսորդ երեր դմի վայրի հաւ։

Արզամ.

Այլ որսորդ գայ ծանրարեռնեալ եղջերուաւ։
(Ցանկարծ նետ նկաւ սեւեռեցաւ Սահատուրկի սրտին, եւ նա գլորվեցաւ)։

Երուանդ (բարձրաձայն).

Այս ինչ փորձանք, ով արձակեց նետ վրէպ։
(Հեռուէն բազմութիւնը սկսաւ վազել)։

Սլուկ (կողկողելով).

Հայաստանին հասաւ այս նոր երաշխիկ։
(Բազմութիւնը մերձեցաւ)։

Արզամ (լայով գոռալով)։

Կատարուեցաւ մեր արքայի տեսիլը։
(Բազմութիւնը խառնիխուռն կվազվազեն)։

Սլուկ (կանանելով).

Զուր անցաւ մեր խրախուսանք խօսելը։

Երուանդ (նետը քաշելով, հանեց).

Նշան կենաց չէ մնացել յարքայի։
(Բազմութիւնը շրջապատեց).

Արզամ.

Շուտ հոգ տանիք ժառանգութեան իւր գահի։

Սլուկ (առ ժողովն).

Արքայորդւոց մէջէն որուն կըկամիք։

Արզամ.

Արքայորդւոց մէջը չըկան արժանիք։

Սլուկ.

Իշխանաց մէջ ով կայ գահին ժառանգորդ։

Արզամ.

Կեցցէ Երուանդ, մեր արքային նոր յաջորդ։

Բազմութիւն.

Կեցցէ Երուանդ մեր նորընտիր թագաւոր։

Արզամ.

Կեցցէ Երուանդ քաջն արանց փառաւոր։

Սլուկ (Սահատրուկի բացը դրեց Երուանդին)։

Կեցցէ Երուանդ նորապսակ մեր արքայ։

Բազմութիւն.

Կեցցէ Երուանդ կանգնել յոտին զաւուն Հայկայ։

Դեսպան (Երուանդին)

Ինձ Սանատրուկ խոստացել էր կալուածներ։

Երուանդ.

Ինձ այժմ օգնէ, քեզ կան անհուն պարգևներ։

Դեսպան.

Կեցցէ Երուանդ Հռովմայ գահին բարեկամ
Նորա պաշտպան է մեր արքայն բարեխնամ։

Հեղինակ Իրաւախոհ. Թարգմանեցին և վահանի տպագրեցին ի Զմիւռնիա, և Հրատարակեցին վարդապետ Մարգարեանի, ի լոյս ընծայեցին յԱբարարատ Ս. Էջմիածնի, և այլոց։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ԲԱՐԵՊ. ԵՂԻՍԱԲԷԹ ԴԱՒԹԵԱՆ.

Բարեպաշտուհի Եղիսաբէթ այրի Տիկին Դաւթեան Պաճկաճեանց՝ առաւել քան զհայրեր ուրիշս արժողութեամբ մի տուն ընծայեց Գոյարու Հայոց օրիորդաց հոգևոր դպրոցին։

Երանի՜ այնմ՝ որոյ գործոց արդիւնք առաքինական են և աղքատաց՝ ինչպէս է սոյն Տիկնոջ ընծայն. որով թէ ինքեան և թէ Կաձկաձեանց տոհմին անուանք անմահ և յիշատակք փառաւոր կենան մերազնեայ մանկաւոյն սրտից մէջ, և նոցա օրհնութիւնքը և աղօթքները կընդունին։

Այս առթիւ պարտք կհամարիմք և մեզ՝ հրապարակաւ շնորհակալութիւն մատուցանել Խարեպ. Եղիսաբէթ Տիկնոջ՝ գովելով նորա բարի եռանդը և առաքինագործութիւնը։

ՆՈՒԷՐ.

Խարեկր. Մեսրոպ քահանայ Փափազեանց 50 օրինակ Հրահանգ Վերականութեան նուիրեց յօգուտ Նորաշէն Ձեմարանի Մայր Աթոռոյս։

Շնորհակալութիւն կայայտնեմք յիշեալ քահանային։

ԵՐԵՄԻԱ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վ. հ. Հայրապետ յ8ն ամսոյս Եպիսկոպոս ձեռնադրեց զԵրեմիա վարդապետ Տէր Սահակեանց՝ որ Ս. Երուսաղեմի միաբան լինելով՝ չորս տարիէ ի վեր ի Ռուսաստան և ի Պարսկաստան նպաստ հաւաքեց Ս. Երուսաղեմի համար, և զրեա թէ ամէն տեղ ժողովրդեան համակրութիւնքը և յարգանքը գրաւած էր իւր բարեհամբոյր վարուք և արժանավայել ընթացիւք ի մխիթարութիւն ժողովրդեան. ուստի իրաւամբ արժանի հանդիսացաւ Եպիսկոպոսական բարձր աստիճանին։

ՆԵՐՍԷՍ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Գեր. Ներսէս Ս. Եպիսկոպոս Վարժապետեան սոխպեալ անձնական տակրութենէն և ներկայ տարւոյս երկրի բերոց նուազութենէն և վաճառականութեան անյաջողութենէ՝ պարտաւորեցաւ առժամանակ ինչ դադարեցուցանել Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ շինութեան համար նպաստ հաւաքելը և հրամանաւ Վ. հ. Հայրապետի ասի մեկնեցաւ ի 15-ն ամսոյս վերադառնալ ի Կ. Պոլիս։

Նորին Գերապատուութեան հետ ուղևորեցաւ ասի և Գեր. Երեմիա Նորապսակ Եպիսկոպոսն։

Մ. ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՆՈՒԷՐ.

Երբեմն Մայր Աթոռոյս Ժառանգ. Ուսումնարանի երաժշտութեան դասատու տիրացու Մ. Կարապետ Առաքելեան Կ. Պոլսեցի՝ քան և մի հատ կանթեղաց պղնձեայ թափցու գունաեր հանգերձ ամենայն պարագայիւքն ընծայեց Տաճարիս սրբոյ Էջմիածնի ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ բարեպաշտ քեռն իւրոյ։

Շնորհակալութիւն կմատուցանեմք յիշեալ ջերմեռանդ և եկեղեցական ժամերգութեանց քաջահմուտ Վարժապետին Առաքելեանց, և մաղթեմք ի Տեառնէ լուսաւորել զհոգի հանգուցելոյն և

արժանացուցանել երանական ձայնին և անմահ կենաց։

Աւելորդ չեմք համարել ծանուցանել ևս, զի յիշեալ Պ. Կարապետ վարժապետն Մայր Աթոռոյս Յառանգաւորաց ուսումնարանի մէջ բաւական աշակերտ հասուցած է, որք այժմ կանոնաւոր կերգեն Շարականքը ևն. նա և ի նմանէ Եկեղեց. երգեցողութիւնքը՝ շարականները և այլն, ամբողջապէս ձայնագրութեան առած է Տիրացու Պ. Համբարձում Ղէրծիձեան ձայնագրագէտ երաժիշտն՝ ծախիւք և ջանիւք արժանայիշատակ և բարեպաշտ Կարապետ Աբք. Ն՚արտաբապետ Ամիրայի Պալեանց։

Կյուսամք զի ի սուղ ժամանակի կարդիւնաւորին նոցա աշխատութիւնքը՝ որ մինչև ցարդ լոյս տեսած չէ, ձեռնտուութեամբք Աղգասէր և ջերմեռանդ Հայազնեայց։

ՎՍԵՄ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱՏ ՄԱՆՈՒԿ — ՊԷՅ.

Սիրտ առն ի գործոցն յայտնի է, իսկ գործքն հաչակահար ապացոյցք են առաքինեացն՝ որպէս բարի պտուղն՝ ծառոյն։

Ուրեմն արդարացի գովեստներով և երախտագէտ զգացմամբք պարտիմք հրաչակել մի այնպիսի բարեգործ իշխանի՝ Վ՚սեմափայլ Յովհաննու Մուրատ-Մանուկ — Պէյի Աստուածահաճոյ սխրագործութիւնքը և բարեացառիթ առաքինութեանց բազմարդիւն պտուղները, որովք Նորին վեհագղաց սիրտ ո՛չ թէ միայն գրթառատ հայր և պաշտպան կհանդիսանայ յաւէտ մերաղնեայ կարօտելոց, ո՛չ թէ լոկ ամեն տարի շարունակ առանձին առանձին բաւական գումարներ կնուիրէ Օտեսայի, Պիշնևի և Հնչեշտ գիւղաքաղաքի Հայոց դպրոցաց ի դաստիարակութիւն և ի լուսաւորութիւն Հայկազն մանկտեաց, այլ և իւր կալուածք Հնչեշտի մէջ 1870 թուին ձեռնարկեց Աստուծոյ տաճար կառուցանելոյ, և նոյն հոյակապ և խաչաձև շէնքը ներկայ տարւոյս Օգոստոսի մէջ աւարտեց՝ իւր սեփհական արդիւնքներէն 55,000 ռուբլի ծախսելով, և ի 17ն Սեպտեմբերի՝ հրամանաւ Վ՚եհ. Հայրապետի մերոյ՝ նորա Ս. Օծման նաւակատիքը կատարուեցաւ շքեղ հանդիսիւ, որ նուիրեալ է յանուն Տիրամօր Ս. Կուսին։

Վ՚սեմ. Իշխանի այս առաքինական մեծագործութեան կատարումը արդէն բաւական մխիթարութիւն է իւր Աստուածասէր և ազգանուէր սրտին, և իւր անմահ անուան և յիշատակին օրհնաբան դրուագներ և գովեստներ հիւսողք բազումք կլինին, և պսակս դափնեայս կբոլորեն ի գլուխն նորա. իսկ լուսեղէն պսակը անշուշտ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս ունի ի հանդերձելումն շնորհել յիշեալ Յովհաննէս Մուրատ-Մանուկ-Պէյին։

Ուստի մեզ կմնայ այժմ՝ Վ՚սեմ. Իշխանէն բարեբարեալ Հայկազն մանկուցն և ողորմելեկալ աղքատաց՝ ինչպէս և Հնչեշտաբնակ մերաղնեայց ի դիմաց թարգման կալ և հրապարակաւ երախտագէտ զգացմանց և խորին մեծարանաց հաւատիքը մատուցանել Նորին Պայծառափայլութեան, և բարեմաղթել ի Տեառնէ պարգևել յաւէտ մերաղնեայ կարօտելոց, ո՛չ թէ լոկ ամեն տարի շարունակ առանձին առանձին բաւական գումարներ կնուիրէ Օտեսայի, Պիշնևի և Հնչեշտ գիւղաքաղաքի Հայոց դպրոցաց ի դաստիարակութիւն և ի լուսաւորութիւն Հայկազն մանկտեաց, այլ և իւր կալուածք Հնչեշտի մէջ 1870 թուին ձեռնարկեց Աստուծոյ տաճար կառուցանելոյ, և նոյն հոյակապ և խաչաձև շէնքը ներկայ տարւոյս Օգոստոսի մէջ աւարտեց՝ իւր սեփհական արդիւնքներէն 55,000 ռուբլի ծախսելով, և ի 17ն Սեպտեմբերի՝ հրամանաւ Վ՚եհ. Հայրապետի մերոյ՝ նորա Ս. Օծման նաւակատիքը կատարուեցաւ շքեղ հանդիսիւ, որ նուիրեալ է յանուն Տիրամօր Ս. Կուսին։

Վ՚սեմ. Իշխանի այս առաքինական մեծագործութեան կատարումը արդէն բաւական մխիթարութիւն է իւր Աստուածասէր և ազգանուէր սրտին, և իւր անմահ անուան և յիշատակին օրհնաբան դրուագներ և գովեստներ հիւսողք բազումք կլինին, և պսակս դափնեայս կբոլորեն ի գլուխն նորա. իսկ լուսեղէն պսակը անշուշտ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս ունի ի հանդերձելումն շնորհել յիշեալ Յովհաննէս Մուրատ-Մանուկ-Պէյին։

գլեալ նմին կեանս երկարս և բարեբաստիկս ի յարատևութիւն և ի յաւելումն առաքինական գործոց և բարեմասնութեանց հոգւոյն, և միշտ պահել և փայլեցնել զնա մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Աստի հոյակապ որդին ի վիթիարութիւն և ի յառաջադիմութիւն թշուառ որդւոց Հայաստանի։

Ի ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ

Սեպտ. 27 թուով ի Նոր-Ջուղայէ ստացեալ մի գրութենէ հետևեալ բերկրաբութ տեղեկութիւնքը կքաղեմք և կը հաղորդեմք ի տեղեկութիւն մեր սիրելի համազգայնոց։

Ըստ խնդրանաց Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց վիճակաւոր Առաջնորդ Գեր. Գրիգորիս Ս. Եպիսկոպոսի՝ Պարսից Օգոստ. Շահն բարեհաճել է հրամայել Թեհրանայ Հայոց Դպրոցին մշանջենաւորապէս տարեկան 200 թուման նուիրել արքունի գանձէն, ևս Համատանաբնակ մերազնեայց ներկայ տարւոյ տուրքէն 150 թուման շնորհել։

Նորին Վեհափառութեան այսպիսի շնորհները արդարև իւր հպատակասէր և բարեսիրտ գովելի յատկութեանց ապացոյցներ են՝ ինչպէս վայել է միշտ թագաւորի, որ զհպատակս կը պարտաւորէ բարեմաղթու հանդիսանալ միշտ գրաւելով զսիրտս նոցա։

Նաև գոհութեամբ պէտք է հռչակել Գեր. Գրիգորիս Ս. Եպիսկոպոսի այն ջանքն ևս, որ ինչպէս համայն վիճակին հայրական խնամք տանելոյ և բարեկարգութիւնք հաստատելոյ և դպրոցները յաւելլոյ և յառաջադէմ և արդիւնաւոր փայլեցնելոյ դուն կգործէ, նոյնպէս կը ձգնի Նոր-Ջուղայու Համենափրկչեան վանուց բարեզարդութեան համար, և Հնդկաստանաբնակ մերազնեայ Մեծ. Մանուկ Յորդանանեան հայրենասէր պատուական տէրի ի բազմաց հետէ նուիրած և երեսի վերայ անգործ սարդիոսատայնով պատած տպագր. մամուլը և տառերը - որոց հետևանաւ տառից մայրերը և հայրերը - առանձին ուշադրութեան առնլով՝ ուսումնասէր անձինքներէ մի յանձնախումբ կկազմէ և մամուլը սարքել և տառերը զատել և կարգադրել տալով՝ տպարան հաստատած է ի յիշեալ վանսն, և առաջին անգամ մի Յայտարարութիւն տպած ուղղել է առ մերազնեայսն Հնդկաստանու և Ջավայու՝ նպաստել նոյն տպարանին ուրիշ կարևոր պարագայքն լրացնելոյ համար ըստ կարելւոյն, և զայն ազգօգուտ փայլեցնելոյ։ Նա և սկսել են տպել մի Այբբենարան Վիճակին դպրոցաց համար, զոր ցարդ դուցէ աւարտած լինին։— Յայտարարութենէն մի օրինակ ևս առ մեզ խրկուած է։

Այսուամբ որ Գեր. Գրիգորիս Ս. Եպիսկոպոսի անխոնջ ջանից և աշխատութեանց շնորհիւ ըստ բաւականին կը բարեկարգուի նոյն տպարանն և կարգիւնաւորուի։